

# ԱԳՐԻԿԱ

# Լրատու

ՍԵՊՏԵՄԲԵՐ 25 - ՆՈՎԵՄԲԵՐ 5 2015 Թ. ԹԻՎ 25 (2080)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



### Առաջացած խնդիրներն հաղթահարելի են

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձոր՝ խաղողի մթերման մեկնարկին ընդառաջ տեղում խնդիրները քննարկելու նպատակով:

Նախարարի այցի առաջին կանգառն Աղավնաձոր համայնքում էր: Նախարարը, Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի և «Սպայկա» ընկերության ներկայացուցչի ուղեկցությամբ, նախ դիտարկել է համայնքի խաղողի այգիները, գրուցել խաղողագործների հետ: Աղավնաձորցիները հայտնել են, որ գոհ են այս տարվա բերքից՝ միաժամանակ որոշակի մտահոգություն հայտնելով իրացման խնդիրների շուրջ: Նախարարը տեղեկացրել է, որ արդեն մարզ է ժամանել «Արմենիա Վայն» ընկերության ներկայացուցիչը, ով նախատեսում է գյուղացիների հետ պայմանագրեր կնքել:

«Այս տարի Վայոց ձորի մարզում առկա է խաղողի առատ բերք, և վերամշակող ընկերությունները հոկտեմբերի 5-ից սկսել են մթերման գործընթացը: Ընդհանուր առմամբ, Վայոց ձորի մարզից պատրաստ են խաղողի մթերումներ իրականացնել ընդհանուր թվով 17 ընկերություն, որից 10-ը գործում են մարզում», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով՝ մարզում անցյալ տարի արտադրվել է շուրջ 5100 տոննա խաղող, այս տարի բերքն ավելի առատ կլինի, որից մոտ 3000 տոննան կկազմի Արենի սորտը:

Ս. Կարապետյանը հավաստիացրել է, որ ամբողջ բերքը մթերվելու է, և այս առումով մտահոգություններ չկան, սակայն խաղողագործները և մթերող ընկերությունները որոշակի անհամաձայնություններ ունեն մթերման գնի շուրջ: «Արմենիա Վայն» ընկերությունը ներկայումս Արենի սորտի դեպքում պայմանագրեր են կնքում 200-210 դրամով: Նկատի ունենալով բերքի առատությունը՝ նախարարը հորդորել է գյուղացիներին ըմբռնումով մոտենալ խնդրին:

Նախարարը ևս մեկ անգամ հորդորել է ավելորդ շտապողականություն չցուցաբերել՝ նշելով, որ այն խաղողագործները, ովքեր չունեն պայմանագրեր, ևս մտահոգվելու առիթ չունեն. նրանց արտադրած ամբողջ բերքը ևս մթերվելու է:

Ե 2

### Սահմանամերձ համայնքներին աջակցելու նպատակով

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Տավուշի մարզ՝ խաղողի մթերման կազմակերպման աշխատանքներին հետևելու նպատակով: Նախարարը եղել է մարզի մի շարք սահմանամերձ համայնքներում և բոլոր վերամշակող ընկերություններում:

«Սահմանամերձ համայնքները մշտապես գտնվում են մեր ուշադրության կենտրոնում և մեր նպատակն է առավելագույնս աջակցել այս համայնքների բնակիչներին, ովքեր իրենց կյանքի գնով են բերքը մշակում՝ իրացումն առանց խոչընդոտների կազմակերպելու հարցում», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը: Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղի տնօրեն Գարիկ Վարդանյանի տեղեկացմամբ ընկերությունն օրական մթերում է 200 տոննա խաղող, ընդ որում, ամբողջությամբ Տավուշի մարզից: Ըստ նրա՝ խաղողագործների հետ կնքված պայմանագրերով նախատեսվում էր մթերել 4100 տոննա խաղող, սակայն որակյալ արտադրանքի առաջարկի դեպքում ընկերությունը պատրաստ է անսահմանափակ քանակությամբ մթերումներ իրականացնել: Ընկերության կողմից արդեն իսկ մթերվել է 2500 տոննա խաղող: Տնօրենը նաև տեղեկացրել է, որ գործարանն ունի 19 մշտական և 21 սեզոնային աշխատակիցներ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 120 հազար դրամ, բոլորը մարզի բնակիչներ են: Այնուհետև նախարարն ուղևորվել է դեպի Այգեպարի գինու գործարան: Այստեղ խաղողի մթերումները կսկսվեն սեպտեմբերի 28-ից: Թեև նախապես պայմանագրեր չեն կնքվել գյուղացիների հետ, սակայն պատասխանատուները հավաստիացրեցին, որ պատրաստ են մթերել ամբողջ բերքը: Նախարար Սերգո Կարապետյանը հանդիպումներ է ունեցել նաև Վարազավան համայնքի խաղողագործների հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին: Խաղողագործ Սվետլանա Խաչատրյանը

Ե 2

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

### Խաղողի մթերման գործընթացը՝ կառավարության ուշադրության կենտրոնում

ՀՀ կառավարության հերթական նիստում վարչապետը գյուղատնտեսության նախարարից հետաքրքրվել է հանրապետությունում խաղողի մթերման գործընթացով:

Նախարար Սերգո Կարապետյանը տեղեկացրել է, որ խաղողի մթերման աշխատանքներն ընթացքի մեջ են. աշխատանքները սկսվել են սեպտեմբերի 7-ից: «Հանրապետությունում այսօր ունենք 49 մթերող կազմակերպություններ, որոնցից 32-ում արդեն մթերման աշխատանքները սկսված են: Հիմնականում աշխատանքները չեն սկսվել Վայոց ձորի մարզում, որտեղ խաղողի շաքարայնությունը դեռևս ցածր է. մթերման աշխատանքները սկսվել են հոկտեմբերի 1-ից: Տավուշի մարզում, որտեղ նույնպես մթերման աշխատանքներն ընթացքի մեջ են. 5 մթերող կազմակերպություններից 3-ը սկսել են մթերման աշխատանքները, երկուսն առաջիկա 2-3 օրերի ընթացքում կսկսեն: Իհարկե, խաղողի մթերման հարցում կան որոշակի դժվարություններ: Հասկանալի պատճառներով, գինեգործարանները հիմնականում չեն կարողացել ֆինանսական հոսքեր ապահովել, որոնք նախատեսված էր տարեսկզբին՝ կապված արտահանումների ծավալների կրճատման հետ: Կազմակերպություններում տարաները լիքն են, սակայն բոլորի կողմից կա այն մոտեցումը, որ խաղողը պետք է մթերվի ամբողջապես, և դաշտում խաղող չի մնալու: Արդեն մթերվել է 80 հազար տոննա խաղող՝ անցյալ տարվանից մոտավորապես 20 հազար տոննա պակաս: Մթերողների թիվն ավելանում է և ես համոզված եմ, թեկուզ եղած դժվարություններով հանդերձ, մթերումները նորմալ անցկացնելու ենք: Այս տարի խաղողի ծավալը, նախորդ տարվա համեմատ, կարելի է ասել 30 տոկոսով ավելին է: Մենք 15-20 տոկոսի կանխատեսումներ ունենինք, սակայն փաստորեն արտադրական ծավալներն ավելի են: Նախորդ տարի հանրապետությունում արտադրվել է 281 հազար տոննա խաղող, այս տարի սպասվում է մոտ 300 հազար տոննա խաղողի բերք: Անցյալ տարի մթերվել է 181 հազար տոննա, այս տարի կանխատեսվում է ավելի շատ մթերել: Առաջարկն ավելի է, քան պահանջարկը, սակայն այդ խոչընդոտները մենք կհաղթահարենք», - ասել է գյուղատնտեսության նախարարը:

«Խնդրում եմ իրականացնել ամենօրյա հետևողական աշխատանք և եթե հարց լինի՝ մենք պատրաստ ենք աջակցել», - նշել է կառավարության ղեկավարը: Խաղողի մթերման գործընթացը վերահսկվում է նաև ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության կողմից:

\*\*\*

Հանրապետությունում խաղողի մթերման գործընթացը շարունակում է գտնվել վարչապետ Հովիկ Աբրահամյանի անմիջական ուշադրության կենտրոնում:

Կառավարության ղեկավարը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի և Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի ուղեկցությամբ, կրկին այցելել է Արարատի մարզ, եղել տեղի մթերող կազմակերպություններում, հանդիպել խաղողագործների հետ և ծանոթացել մթերման աշխատանքների ընթացքին: Վարչապետը կարևորել է խաղողի մթերման գործընթացը կազմակերպված անցկացնելու հանգամանքը և նշել, որ կառավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահելու խաղողի բերքը պատշաճ և ժամանակին մթերելու գործընթացը:

Կոոպերացիան Հայաստանում  
ճանապարհ կհարթի Էջ 3

Գյուղացին գոհ է ցուցաբերած  
օժանդակությունից Էջ 5

Մասնագետի  
խորհուրդը Էջ 7





ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿՈՈՊԵՐԱՑԻՎԸ ԼՈՒԾՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

«Եթե ուզում ես խնդիրների լուծման որոշումներ գրել, որոնում ես ճանապարհներ, իսկ եթե չես ուզում՝ փնտրում ես արդարացումներ: Կոոպերատիվը մեզ համար դարձավ այդ ճանապարհներից մեկը», - ասում է Տավուշի մարզի Ենոքավան համայնքի գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ Նելլի Օրդինյանը:

Արդեն 2-րդ տարի է, ինչ գյուղում գործում է կոոպերատիվը, աճեցնում են լոլիկ, ինչպես նաև բուլղարական տաքդեղ: Նախորդ տարի հավաքել են 4 տոննա լոլիկ, կարողացել են ամբողջ բերքը վաճառել նպաստավոր գներով: Հուսով են, որ այս տարի նույնպես գործերը վատ չեն ընթանա:

Նելլին ստացել է բարձրագույն մասնագիտական երկու կրթություն, ավարտել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի բանասիրական ֆակուլտետը, հեռակայել է նաև Մոսկվայի Կոոպերատիվների ինստիտուտում: Այժմ ունի ավելի քան 22 տարվա մասնավարժական ստաժ, աշխատում է դպրոցում, դասավանդում է ռուսաց լեզու և գրականություն: Քանի որ երկու երեխաները սովորում էին Երևանում, ուսման վարձերի վճարման խնդիր էր առաջանում: Ասել է, թե ընտանիքը լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք ուներ: Կոոպերատիվը կարողացավ կարգավորել այդ բացը: «Ինձ համար կոոպերատիվում աշխատելը հետաքրքիր է, կա գիտելիքները հարստացնելու, նոր ոլորտում գործունեության ծավալելու հնարավորություն: Գյուղական կյանքը հազվադեպ է ինքնաբացահայտման, նոր որակով հանդես գալու հնարավորություն ընձեռում, իսկ դա ինձ համար կարևոր էր: Այդ պատճառով էլ ես, առանց տարակուսանքի, կոոպերատիվում ընդունվելու որոշում կայացրեցի: Մեր կոոպերատիվի հիմնական կազմը կանայք են: Մեզ վրա հենվում են, մեր աշխատանքով է պայմանավորված՝ թե արդյոք կհասնենք հաջողությունների», - հիշում է Նելլին: Ազատ ժամանակ գրեթե չի լինում, սակայն ամռանը, կոոպերատիվի աշխատանքների ամենաթեժ շրջանում, դպրոցն արձակուրդում է, այնպես, որ երիտասարդ

մասնագետը կարողանում է ճիշտ կազմակերպել աշխատանքային օրը:

Հայկական ընտանիքներում այսպիսի ավանդույթ կա, որ տղամարդը պետք է աշխատի, իսկ կինը՝ զբաղվի տնտեսությամբ և երեխաների դաստիարակությամբ: «Մեր ընտանիքում երբեք այդպես չի եղել: Ամուսինս շատ է աջակցում ինձ, օգնում է տնտեսական գործերում: Կարծում եմ, որ մյուս ընտանիքներում նույնպես, որտեղ կանայք զբաղված են կոոպերատիվում, ամուսինները նույնպես այդպես են վարվում, չէ՞ որ աշխատանքը զգալիորեն ավելացնում է ընտանիքի եկամուտները: Եվ, ի վերջո, այդ կարծրատիպը արդեն անցյալում է, շատերն են գիտակցում, որ պետք է հաշվի նստել իրական կյանքի հետ, ընտանիքի կարիքները բավարարելու նպատակով որոնել ցանկացած հնարավորություն: Իսկ աշխատանքը կոոպերատիվում ստեղծում է այն: Թեև եկամուտները մեծ չեն, բայց կայուն են, բավարարել ենք ամբողջ գյուղի լոլիկի պահանջարկը: Ընդհանրապես գյուղում մեզ հետ լավ են վարվում, աջակցում են նաև տեղական իշխանությունները: Մենք էլ մեր հերթին պարտք չենք մտնում, անցյալ տարի մեր խնայողություններից տրամադրել ենք ջրամատակարարման համակարգի նորոգմանը, այս տարի նույնպես որոշել ենք օգնել գյուղին», - պատմում է Նելլին:

Կոոպերատիվը շատ փոփոխություններ է բերել գյուղական կանանց կյանքում, բացել նոր հորիզոններ, մարդիկ հիմա ավելի շատ են շփվում, համագործակցում, աջակցում միմյանց, կապերը ընտանիքներում և համայնքներում ամրացել են:

«Իհարկե, չի կարելի ասել, որ կոոպերատիվը լուծում է մեր բոլոր խնդիրները, այդպես լինել չի կարող, բայց ինչպես ասում են, կամենալու դեպքում՝ անհնարին ոչինչ չկա», - հավելում է Նելլին:

Ուժեղ կամքը հաղթահարում է բոլոր դժվարությունները, կարևորը՝ կամեցողությունն է: Ենոքավան համայնքի գյուղատնտեսական այս կոոպերատիվի փորձը (որտեղ կանայք կարողացել են դրսևորել իրենց



ունակություններն ու առկա հնարավորությունները) ուսանելի է ոչ միայն Տավուշի, այլև հանրապետության մյուս մարզերի նմանատիպ համայնքների համար, որոնցում կանայք ոչ միշտ են կարողանում կարգավորել աշխատանքային զբաղվածության հարցը: Իսկ կոոպերատիվը, ստեղծելով նոր աշխատատեղեր, լուծում է այդ խնդիրը:

Նելլի Օսահական



Արարատի և Արմավիրի մարզեր, Արագածոտնի խախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +12...+14 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը մինչև +26...+28 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև -1...+2 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -2...+1 °C, առավելագույնը՝ +27...+28 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման 27...32 մմ):

Շիրակի, Կոտայքի և Վեդարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +5 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև +20...+24 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում, գիշերը մինչև -2...-3 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -3...-7 °C, առավելագույնը՝ +18...+23 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման՝ 38...66 մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +8...+10 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև

ԵՂՄՆԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2015 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ

+22...+26 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև +2...-4 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -2...-4 °C (Տաշիրում -6 °C), առավելագույնը՝ +23...+24 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման՝ 44...49 մմ):

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +9...+12 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև +25...+28 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև +2...+3 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -1...+2 °C, առավելագույնը՝ +21...+23 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման՝ 62...63 մմ):

Վայոց ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հոկտային շրջաններում +12...+14 °C, լեռնային շրջաններում +6...+8 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև +26...+28 °C, լեռնային շրջաններում՝ +15...+16 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հոկտային շրջաններում մինչև -1...+2 °C, լեռնային շրջաններում՝ -2...-5 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հոկտային շրջաններում՝ +1...+2 °C, լեռնային շրջաններում՝ -3...-4 °C, առավելագույնը՝ հոկտային շրջաններում +27...+28 °C, լեռնային շրջաններում +21...+22 °C): Ամսական

տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման՝ հոկտային շրջաններում 30...40 մմ, լեռնային շրջաններում 70...72 մմ):

Սյունիքի մարզ



Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հոկտային շրջաններում +13...+15 °C, լեռնային շրջաններում՝ +8...+10 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև +26...+30 °C լեռնային շրջաններում՝ +20...+24 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հոկտային շրջաններում մինչև 0...+5 °C, լեռնային շրջաններում՝ 0...-3 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հոկտային շրջաններում՝ +1...+4 °C, լեռնային շրջաններում՝ +1 °C, առավելագույնը՝ հոկտային

շրջաններում +26...+28 °C, լեռնային շրջաններում՝ +23...+24 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ (Նորման՝ հոկտային շրջաններում 30...55 մմ, լեռնային շրջաններում 39...74 մմ):

Երևան քաղաք

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +12...+13 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում գերելը՝ մինչև +26...+28 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև -1...+1 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ +1 °C, առավելագույնը՝ +27 °C): Ամսական տեղումների քանակը սպասվում է Նորմային մոտ՝ 27-32 մմ:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն



### ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՎՈՐԼԳ ՎԻՃԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՑՈՒՄ Է ԿԱՐՏՈՑԻԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Օրերս «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ Վորլդ Վիճի Հայաստանի կողմից կազմակերպված «Կարտոֆիլի» համաժողովը, որի նպատակն էր՝ Հայաստանից ու Վրաստանից կարտոֆիլի արտադրության ոլորտի շուրջ 100 դերակատարի միջև կապերի ստեղծումը՝ բացահայտելու երկու երկրների շուկաներում կարտոֆիլի արտադրությանն ու առևտրաշրջանառությանը, ավելի սերտ համագործակցությանը նպաստող հնարավորությունները:



Կարտոֆիլի 7-ից ավելի գանգվածային արտադրողներ ներկայացրեցին մատակարարման ծավալները, իսկ գնորդները՝ շուկայի պահանջարկի մասին տեղեկություններ: Տեղական շուկայի դերակատարների, միջազգային փորձագետների և ՀՀ կառավարության գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների քննարկման առարկան Հայաստան-Վրաստան կարտոֆիլի արժեքային շղթայի զարգացման լավագույն մոտեցումների համադրումն էր:

«Հայաստանի համայնքներում բնակվող երեխաների և երիտասարդների բարեկեցությանը նպաստելու նպատակով, 2014-ին մեկնարկեցինք Տեղական արժեքային շղթայի զարգացման նախաձեռնությունը: Ծրագիրը վեց մարզերում նպաստում է ֆերմերային տնտեսություններում կարտոֆիլի արտադրության և վաճառքի աճի նոր հնարավորությունների ստեղծմանը: Միայն մեկ տարում Ալավերդու և Ստեփանավանի տարածաշրջանում, կարտոֆիլի արժեքային շղթայում ներգրավված արտադրողների շրջանում, գրանցվել է եկամուտների 152000 ԱՄՆ դոլարով աճ», - նշել է Վորլդ Վիճի Հայաստանի ծրագրի տնօրեն Ժիրայր Էղիլյանը:



Հայկական ագրարագյուղացիական միավորման նախագահ Հրաչ Բերբերյանի խոսքերով, համաժողովը միջազգային փորձի փոխանակման հարթակ է, որտեղ Հայաստանը կարող է դառնալ կարտոֆիլի տնկանյութի արտադրության կենտրոն:

«Տարածաշրջանային այս համաժողովը Վորլդ Վիճի Հայաստանի Լոռու մարզի տեղական արժեքային շղթայի զարգացման ծրագրի (ՏԱՀԶ) մասն է, որը մեկնարկել էր ավելի վաղ՝ 2014 թվականին: Այս տարի անցկացված հանդիպումները հնարավորություն տվեցին ֆերմերներին նվազեցնել ներդրումային ծախսերը և բարձրացնել թե ցորենի, և թե կարտոֆիլի արտադրության որակը», - նշել է տնտեսական զարգացման ծրագրի ղեկավար Հուսիկ Սարգսյանը:

ՏԱՀԶ-ի նպատակն է՝ ապահովել արտադրողների խմբերին անհրաժեշտ հմտություններով՝ հիմնավորված որոշումներ կատարելու և նրանց տնտեսական զարգացումն ապահովելու համար: Այս մեթոդը աշակցում է նաև արժեքային շղթայի դերակատարներին փոխանակել տեղեկատվություն և համագործակցել արժեքային կիրառման կատարելագործման համար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետների մասնակցությանը համաժողովին հնարավորություն կընձեռն առաջադրված խնդիրներին տալ համակարգված մոտեցում:

Նելլի Սահակյան

### ԱՎԱՆԴՈՒՅՑ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Երևանում անցկացվել է Գյուղական կյանքի և ավանդույթների երկրորդ փառատոնը, որը կազմակերպվել էր Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցում էին և ողջույնի



խոսքով հանդես եկան ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության արտաքին համագործակցության պատասխանատու Ջոն Բարբերը, դեսպաններ, այլ հյուրեր:

Փառատոնի նպատակն է՝ նպաստել Հայաստանում կայուն գյուղատնտեսության զարգացմանը և աջակցել հայ գյուղացիներին՝ ներկայացնելու իրենց արտադրանքը: Ողջունելով միջոցառման կազմակերպիչներին նման նախաձեռնությամբ հանդես գալու առթիվ՝ Գառնիկ Պետրոսյանը մասնավորապես նշել է, որ այն հրաշալի առիթ է քաղաքամայր Երևանում ներկայացնելու գյուղական ավանդույթներն ու կենցաղը: «Գյուղատնտեսական տարին մոտենում է ավարտին, և մեր հանրապետության տարբեր մարզերի գյուղացիական տնտեսությունները և ֆերմերային խմբերը, որոնք ամբողջ տարվա ընթացքում մեծ նվիրումով ու աշխատասիրությամբ, հայրենի հող ու ջրի նկատմամբ անսահման սիրով և նաև մեծ դժվարությամբ բերք ու բարիք են արարել, այսօր հնարավորություն ունեն այս-

տեղ ներկայացնել իրենց աշխատանքի պտուղները», - իր խոսքում նշել է փոխնախարարը: Երևանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը, իր հերթին կարևորելով նման միջոցառումների անցկացումը մայրաքաղաքում, նշել է. «Այս կարևոր փառատոնի շնորհիվ գյուղը իր ավանդույթներով, իր կյանքի բարիքներով ներկա է լինում մեր մայրաքաղաքում և ծուլվում քաղաքային կյանքին. այս ամենին մասնակից են մեր գյուղական բնակավայրերի, գյուղատնտեսության ոլորտի արտադրողներ, ֆերմերներ: Մայրաքաղաքն, իր քաղաքային ավանդույթների հետ միասին, նաև կարիք ունի այսպիսի ավանդական փառատոնների: Բերքի այս փառատոնը շատ կարևոր է տնտեսական, ինտեգրացիոն կապերի, գյուղացիական ֆերմերների աշխատանքը խրախուսելու առումով»: Միջոցառմանը մասնակցում էին ավելի քան 70 ֆերմերային խմբեր, գյուղատնտեսության ոլորտի ձեռներեցներ Հայաստանի բոլոր մարզերից և Վրաստանից, Արցախից, ովքեր ներկայացնում են իրենց արտադրած գյուղ-



թերքը՝ ողջ բազմազանությամբ: Փառատոնին ներկայացված էին տարբեր մարզերի բերքն ու բարիքը, պանրի տեսականի, գինիներ, հյութեր, ձիթապտուղ, չրեր, բուսական թեյեր, մթերքներ գոմեշի կաթից, էկոլոգիապես մաքուր օճառներ, շինշիլաներ և այլն, ինչպես նաև կազմակերպվել էր ձեռագործ աշխատանքների ցուցադրություն-վաճառք: Միջոցառումն ուղեկցվում էր ազգային երգ ու պարով և թատերական ներկայացումներով:

## ԽՈՐՈՎԱԾԻ 7-ՐԴ ՀԱՄԱՅՆՔԱՎԱԿԱՆ ՓԱՌՍՈՆ

Ախթալայում, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) մասնակցությամբ, տեղի է ունեցել արդեն ավանդական դարձած Խորովածի 7-րդ համահայկական փառատոնը:

Փառատոնին մասնակցում էին ուսումնական կենտրոններ, հասարակական կազմակերպություններ, անհատներ, սննդի կետեր, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ և մասնակիցներ Վրաստանից: Փառատոնը կազմակերպել էր «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ն: Փառատոնն ուղեկցվել է ազգային երգ ու երաժշտությամբ և պարային խմբերի ելույթներով:



Խորովածի, արվեստի և երաժշտության փառատոնին Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից այցելուներին ներկայացվել են «ՀայԿար» սոցիալական ձեռնարկության տարբեր արտադրանքներ, ՀԵԿԱ-ի նախաձեռնությամբ, Լոռու մարզի տարբեր համայնքներում ստեղծված կարպետագործության և կավագործության խմբակների աշխատանքները, ինչպես նաև ՀՀ Կին ձեռներեցների ցանցի անդամների կողմից պատրաստված հուշանվերներով, մեղրամոմից մոմերով, հրուշակեղենով:

Խորովածի համահայկական փառատոնն անցկացվում է 2009 թվականից: Փառատոնի գաղափարի ստեղծման և կյանքի կոչման գործում իր ուրույն դերն է ունեցել Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան: Փառատոնը նպատակ է հետապնդում՝ նպաստել միջազգային ու ներքին զբոսաշրջության շուկայում Հայաստանի և Ախթալա համայնքի՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջավայրի նկարագրի ձևավորմանը, նպաստել հայկական ավանդույթների և մշակույթի պահպանությանն ու զարգացմանը՝ մասսայականացնելով և միջազգայնորեն ճանաչելի դարձնելով հայկական ավանդական ուտեստները, այդ թվում՝ խորովածի զանազան տեսակները:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՃԱԳԱՐԻ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲՈՒԺՈՒՄԸ



Ճագարաբուծությունը համարվում է արագ զարգացող, եկամտաբեր և համեմատաբար քիչ աշխատատար անասնապահական ճյուղ:

Ճագարներն առանձնանում են որոշ կենսաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, մասնավորապես լինելով բազմացիկլիկ կենդանիներ, սեռահասունության են հասնում 16-24 շաբաթականում, հղիությունը տևում է 30-33 օր, ծնված ձագերի քանակը՝ 4-12, մատղաշի անջատումը մորից՝ 7-8 շաբաթականում, ինտենսիվ զարգացման և բարձր մսային մթերատվության հետ մեկտեղ, այս կենդանատեսակները բա-

վական զգայուն են զանազան ախտաբանական գործոնների նկատմամբ, որոնք և զանազան հիվանդությունների առաջացման, մթերատվության նվազման և կենդանիների անկման պատճառ են դառնում:

Ճագարների առավել հաճախ հանդիպող ախտաբանական վիճակը պայմանավորված է մարսողական համակարգի գործունեության ֆունկցիոնալ կամ օրգանական հիվանդությունների առաջացմամբ:

ՃԱԳԱՐԻ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԱԶԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Պատճառները	Ցուցում
<p><b>ԹԱՂԱՆԹԱՆՅՈՒԹԻ ՑԱԾՐ ԸԱՆԿՎՈՒԹՅՈՒՆ ԿԵՐԱԲԱԺՆՈՒՄ</b></p> <p>Ճագարների կերաբաժնում թաղանթանյութի առկայությունը ծայրահեղ կարևոր է: Թաղանթանյութի ցածր քանակությունը (կերի չոր կյուրում ցածր՝ քան 18-20%) առաջ են բերում մարսողական համակարգի գալարակծկանքի թուլացում, կերազանգվածի կանգ, նեխում, օրգանիզմի ինքնաթունավորում, կույր աղիներում մանրէական ֆլորայի հավասարակշռության խախտում, որոնք հանգեցնում են մթերատվության նվազեցման, աճի ու զարգացման դանդաղեցման և, նույնիսկ, անկման: Երբ կերաբաժնում նվազում է թաղանթանյութի քանակը, աղիներում կտրուկ բարձրանում է pH-ը, որի պայմաններում Clostridia և Escherichia coli մանրէների պոպուլյացիան կտրուկ աճում է: Կերում թաղանթանյութի բարձր պարունակությամբ կենդանիների մոտ շատ հազվադեպ են նկատվում աղբորբեր և էնտերոտոքսեմիա (բակտերիալ թունավորում), և նույնիսկ թաղանթանյութը պաշտպանում է էնտերոտոքսեմիայի առաջացումը՝ հակաբիոտիկաբուժման պայմաններում:</p> <p>Թաղանթանյութի պակասը հանգեցնում է տիմպանիայի (փքվածություն) առաջացմանը:</p>	<p>Թաղանթանյութի հիմնական աղբյուր են հանդիսանում խոտը և նվազագույնը 2-4 ժամ թառամեցրած կանաչ զանգվածը: Կենդանիների կերամաններում մշտապես պետք է լինի խոտ կամ թառամեցրած կանաչ զանգված: Ծղոտում թաղանթանյութի պարունակությունը՝ 40, իսկ խոտում՝ 25-35 %:</p> <p>Խոտը կամ կանաչ զանգվածը ճագարների կերաբաժնում պետք է զբաղեցնեն ընդհանուր հաշվեկշռի 50-60 %-ը:</p>
<p><b>ՇԱԶԱՐՈՎ ԿԱՄ ՕՍՒԱՅՈՎ ՀԱՐՈՒՄՏ ԿԵՐԵՐՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄ</b></p> <p>Իրականում ճագարների պահանջը դյուրամարս ածխաջրատաների նկատմամբ նվազագույնն է, համեմատած այլ կենդանատեսակների հետ: Հաշվի չառնելով այս հանգամանքը և ճագարներին կերակրելով օսլայով կամ շաքարներով հարուստ կերերով, առաջ է գալիս կենդանիների ճարպակալում, փքանք և էնտերոտոքսեմիա, որի առաջացման պատճառը այն է, որ ածխաջրատների գերքանակության դեպքում, նրանք ստամոքսում չեն ներծծվում, անցնում են աղիներ և նպաստում Clostridia, Escherichia coli մանրէների և սնկերի պոպուլյացիայի կտրուկ աճին:</p> <p>Օսլայի առավել մեծ քանակներ են պարունակում արմատապալարները, սերմերը և պտուղները (կարտոֆիլի չոր կյուրի 20% և ավելին օսլա է, իսկ եգիպտացորենի հատիկներում՝ ավելի քան 70%-ը), մեծ քանակի շաքար են պարունակում գագարը, շաքարի ճակնդեղը, դդումը, ձմերուկը: Օսլայի և դյուրամարս շաքարների հարուստ աղբյուր են նաև հատիկային կերերը՝ գարին, եգիպտացորենը, ցորենը, վարսակաձավարը:</p>	<p>Օսլայով կամ շաքարներով հարուստ կերերով կերակրումը միշտ համարել թաղանթանյութի բարձր պարունակությամբ կերերով կերակրմամբ: Կերաբաժիններում նման կերերի քանակը չպետք է գերազանցի 20-35 %-ը:</p> <p>Հատիկային կերերի ընդհանուր քանակը կերաբաժնում չպետք է գերազանցի 35-45 %-ը թաղանթանյութով հարուստ կերի նկատմամբ:</p>
<p><b>ՃԱԳԱՐՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԸՎՐՑԻ ՎԻՃԱԿԸ</b></p> <p>Ճագարների 2-3-ժամյա քաղցած վիճակը հանգեցնում է ստամոքսափայտի թթվայնության խիստ նվազեցման (արտադրվում է մեծ քանակի թթու ստամոքսափայտ), որը առաջ է բերում աղեկծկանքի թուլացում, փորկապություն: Թթու ստամոքսափայտը սկզբում բորբոքում, հետագայում ժամանակի ընթացքում նաև խոցոտում է ստամոքսի պատերը և պատճառ հանդիսանում գաստրիտ ու ստամոքսի խոց հիվանդությունների առաջացմանը:</p>	<p>Բացառել կենդանիների, ավելի քան 1-1.5 ժամ քաղցած մնալու հանգամանքը: Կերամանները մշտապես ապահովել խոտով, կանաչ զանգվածով, հատիկային կամ գրանուլային կերերով:</p>

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՀԱՅԱՀԱՏԻԿԸ՝ «ՈՍԿԵ ՀԱՍԿԻ» ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Վարդենիսում երկրորդ անգամ անցկացվել է «Ոսկե Հասկ» փառատոնը, որի նպատակն է՝ խթանել փոքր բիզնեսի զարգացումը Գեղարքունիքի մարզի ամենահեռավոր քաղաքում: Փառատոնն անցկացվել է տեղական համայնքների զգալի ներդրմամբ, ինչը հնարավորություն է տալիս մասնակիցներին ավելի լավ ծանոթանալ տարածաշրջանի արտադրական ներուժին, նաև սովորել ճիշտ իրացնել սեփական արտադրանքը շուկայում:

Տասնյակից ավելի տաղավարներում մասնակիցները ցուցադրել և վաճառել են ինչպես ոգելից խմիչքներ, հյուրեր, քաղցրավենիքներ, թղվածքաբլիթներ, մրգեր ու տարածաշրջանին բնորոշ բուժիչ խոտաբույսեր, այնպես էլ՝ ձեռագործ աշխա-



տանքներ, կոլաժներ, փոքրիկ խաչքարեր, կավից պատրաստված սպասք:

«Ոսկե Հասկ» փառատոնի կազմակերպիչներից Լյուսի Վարդենյանը նշել է, որ փառատոնի անվանումն անմիջական կապ ունի տարածաշրջանի հետ, քանի որ Վարդենիսը հայտնի է հացահատիկի մշակմամբ: Ըստ նրա՝ փառատոնի միջոցով տարածաշրջանում փորձում են ոչ միայն զարգացնել փոքր բիզնեսը, այլև՝ աշխուժացնել տեղական համայնքների կյանքն ու զբոսաշրջությունը: «Ճատ կարևոր է, որպեսզի հեռավոր այս բնակավայրում ապրողները զգան, որ իրենք անտեսված չեն, իսկ իրենց արտադրատեսակները կարող են մրցունակ լինել տեղական և արտասահմանյան շուկայում»:

Վերջինիս տեղեկացմամբ՝ փառատոնին մասնակցելու միակ նախապայմանը տնային պայմաններում հացահատիկից պատրաստված ամենատարբեր կերակրատեսակներով ներկայա-նալն էր: Վարդենիսի քաղաքապետարանի և սոցիալական հար-



ցերի բաժնի պետ Սուսաննա Բարսեղյանի գնահատմամբ՝ դեռ նախորդ տարվանից փառատոնն ազդեցություն է ունեցել համայնքների միավորման ու փոխգործակցության սերտացման և գյուղական արտադրանքի զարգացման վրա: «Վարդենիսի տարածաշրջանը համարվել է հացահատիկի շտեմարան՝ անկախ բնակլիմայական պայմաններից, այստեղ առկա կարևոր խնդիրներից է արտադրանքի արտահանման ու իրացման հարցը, ինչը պայմանավորված է տարածաշրջանի հեռավորությամբ և սպառողական լայն շուկայի բացակայությամբ», - նշել է Ս. Բարսեղյանը: Ըստ նրա՝ ներկայումս «քարից հաց քամող» վարդենիսցի ունի աշխատատեղի խնդիր, որը հնարավոր կլինի լուծել, եթե տարածաշրջանում բացվեն արտադրական ձեռնարկություններ:

«Ոսկե Հասկ» փառատոնը կազմակերպվել էր Հայրենիքի զարգացման նախաձեռնություն (ՀՁՆՍ), Վարդենիսի համայնքի զարգացման հիմնադրամների և Վարդենիսի քաղաքապետարանի համատեղ ուժերով: Միջոցառմանը ֆինանսական աջակցություն էր ցուցաբերել «Զինվորական հիշատակի հիմնադրամը» և «Վորլդ Վիժն Հայաստանը»:

